

Մ. Զ. Գրիգորյան
Ն. Բ. Բաբայան

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

N

1840-Ա

ք. Երևան

27 նոյեմբեր 2009թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ԳԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլխավոր հիմնադրամի կողմից «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և «Նյու Ինտերնեյշնլ Բիզնես Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2009 թվականի հուլիսի 28-ին կնքված «Մատակարարման պայմանագիր» N ARM 506-G-02-T-AG0734 պայմանագիրը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլխավոր հիմնադրամի կողմից «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և «Նյու Ինտերնեյշնլ Բիզնես Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2009 թվականի հուլիսի 28-ին կնքված «Մատակարարման պայմանագիր» N ARM 506-G-02-T-AG0734 պայմանագրով ձեռքբերված գույքը՝ համաձայն Հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահության էկոնոմիկայի և հաշվապահական հաշվառման վարչության պետ Ա.Կարապետյանին՝

125. 17.12.2009

- 1) ապահովել սույն հրամանի 1-ին կետից բխող ֆինանսական հաշվարկների և նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը:
3. «Տուրերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Թադևոսյանին՝
- 1) ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված գույքի անհրաժեշտ քանակությամբ բաշխումը պետական պատվերի շրջանակներում տուրերկուլոզի դեմ պայքարի կազմակերպում իրականացնող բժշկական հաստատություններին:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ա.Մանուկյանին:

Հ.ԲՈՒՇԿՅԱՆ



Հավելված

ՀՀ առողջապահության նախարարի

2009 թվականի *հուլիսի 27* » *ՁԲ*-ի N *1840* -Ա հրամանի

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՉԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ
ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

N	Ապրանքի անվանումը	Քանակը	Միավորի գինը՝ առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)	Գումարը՝ առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)
1.	Բժշկական ձեռնոցներ ոչ ստերիլ, ցանափոշիով	4800 /գույգ/	41	196 800
2.	Բժշկական խալաթներ ԷՄ չափսի	28 /հատ/	9370	262 360
3.	Բժշկական խալաթներ ԷԼ չափսի	10 /հատ/	9370	93 700
4.	Բժշկական գլխարկներ /բուժքլույզ/	1000 /հատ/	32	32 000
	Ընդամենը			584860